ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1445

21.08.2014թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ՝
պարոն՝ Վ.Գասպարյանին

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՏՍԲ
ՄՏՊ № 3346
22 08 2014

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը մոտ մեկ տարի առաջ դիմել էր Ձեզ, Դիտորդական խմբի ներքին կանոնակարգում լրացումներ և փոփոխություններ կատարելու համար:

2013թ-ի ընթացքում 13 կետից բաղկացած առաջարկությունների փաթեթից միայն ոստիկանության կողմից ընդունելի է եղել և մասնակի կատարվել է փոփոխություն՝ 4 կետի վերաբերյալ:

Այսպիսով, անցած մեկ տարվա Դիտորդական խմբի աշխատանքները ցույց են տվել, որ կարգում լուրջ փոփոխություններ կատարելու անհարժեշտություն կա, որովհետև ներկայիս գործող ներքին կանոնակարգով խոչընդոտները և սահմանափակումները Դիտորդական խմբի աշխատանքներում շատ են:

Խնդրում ենք ուսումնասիրել կից ներկայացված ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի ներքին կանոնակարգում անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկը:

Կանխավ հայտնում ենք մեր շնորհակալությունը և ակնկալում ենք ոչ միակողմանի, այլ՝ Ձեր օբյեկտիվ մոտեցումը նշված հարցի վերաբերյալ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝

Հ. Սահակյան

6627
22 08 14

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
E-mail: info@policemonitoring.org

Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգի
ձերբակալված անձանց պահելու վայրերում
հասարակական դիտորդների խմբի
գործունեության կարգը սահմանող՝
ՀՀ ոստիկանության պետի 2005 թ. հունվարի 14-ի
թիվ 1-Ն հրամանում
փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին

ԱՌԱՋԱՐԿ

Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խումբը, բարձր գնահատելով ՀՀ Ոստիկանության համագործակցության պատրաստակամությունը, արձագանքումը վերջինիս ներկայացվող խնդիրներին և հիմնվելով խմբի գործունեության երկարամյա փորձի վրա, հանգել է այն եզրակացության, որ Դիտորդական խմբի աշխատանքների արդյունավետության բարձրացման և գործունեության նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է կատարել որոշակի փոփոխություններ Դիտորդական խմբի գործունեության կարգի մեջ, որոնք ներկայացվում են ստորև.

Գործող կարգ	**9-րդ կետ**
Գործող կարգի պահանջը	Խմբի անդամ չի կարող լինել այն անձը, ով՝ ..... ե) հանդիսանում է փաստաբան:
Կարգի փոփոխություն կատարելու առաջարկը	ե)ենթակետերը ճանաչել ուժը կորցրած:
Հիմնավորում	Խումբը անհրաժեշտ է համալրել պրակտիկ գործունեությամբ զբաղվող իրավաբանով, ով կկարողանա վերհանել իրավական խնդիրները, խախտումները, տալ դրանց իրավական նկարագիրը և բացատրությունը: Բացի այդ՝ դիտորդական խմբի կարծիքով փաստաբանի մասնակցության արգելքը չունի օբյեկտիվ հիմք, քանի որ այլ միջոցներով և մեխանիզմների ներդրմամբ կարելի է լուծել շահերի բախման ռիսկը:

Գործող կարգ	**12-րդ կետ**
Գործող կարգի պահանջը	Խմբին առաջադրված խնդիրները լուծելու նպատակով խմբի անդամներն իրավունք ունեն անարգել այցելել ՀՊՎ-ներ, հանդիպել ՀՊՎ-ում պահվող անձանց, ծանոթանալ ՀՊՎ-ների գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերին, ՀՊՎ-ում պահվող անձի համաձայնությամբ՝ նրա անձնական գործին և գրագրությանը, բացառությամբ պետական և ծառայողական գաղտնիք հանդիսացող փաստաթղթերի:
Կարգի փոփոխություն կատարելու առաջարկը	*12-րդ կետը վերաշարադրել հետևյալ կերպ.* *<< Խմբին առաջադրված խնդիրները լուծելու նպատակով խմբի անդամներն իրավունք ունեն անարգել այցելել ՀՊՎ-ներ, հանդիպել ՀՊՎ-ում պահվող անձանց, ծանոթանալ ՀՊՎ-ների գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերին, գրագրությանը, ՀՊՎ-ում պահվող անձի համաձայնությամբ՝ նրա անհատական քարտին>>:*
Հիմնավորում	Նման փոփոխություն իրականացնելու անհրաժեշտությունն ուղղված է խմբի աշխատանքների արդյունավետության բարձրացմանը: Ներկայիս շարադրությամբ գործող դրույթը սահմանափակում է խմբի արդյունավետ գործունեությունը և հնարավորություն չի ընձեռնում խմբին իրականացնելու բազմակողմանի ուսումնասիրություն: Մասնավորապես՝ անհամաչափորեն սահմանափակվել է անձնական գործում գտնվող այնպիսի փաստաթղթերի հասանելիությունը, որոնք իրենց մեջ չեն պարունակում անձի ինքնությունը նույնականացնող տվյալներ: Անձնական գործում առկա են փաստաթղթեր, որոնց ուսումնասիրությամբ և այլ փաստաթղթերի հետ համադրության ու գնահատման միջոցով միայն հնարավոր կլինի պարզել մարդու իրավունքների խախտման դեպքերը և իրականացնել արդյունավետ վերահսկողություն:

Գործող կարգ	**14-րդ կետի**
Գործող կարգի պահանջը	Երրորդ պարբերությունը - Ընթացիկ հաշվետվություններում կարող են ներկայացվել ՀՊՎ-ներում պահվող անձանց իրավունքների խախտման, ինչպես նաև խմբի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու կոնկրետ դեպքեր: Ընթացիկ հաշվետվությունների կապակցությամբ մեկնաբանությունները տրվում են քառասուն օրվա ընթացքում:
Կարգի փոփոխություն կատարելու առաջարկը	*Երրորդ պարբերության « ընթացքում» բառից հետո_ լրացնել հետևյալ բովանդակությունը. «բացառությամբ հրատապ դեպքերի, որոնց մեկնաբանությունները տրվում են տասը աշխատանքային օրվա ընթացքում»:*
Հիմնավորում	*Այս փոփոխությունը անհրաժեշտ է հրատապ խնդիրներին առավել արագ արձագանքելու համար, քանի որ լինում են դեպքեր, երբ խմբի կողմից ներկայացված հաշվետվություններին անհրաժեշտ է պատասխանել դեպքի հրատապությանը համահունչ ողջամիտ ժամկետում: Դիտորդական խումբը չի տեսնում որևէ օբյեկտիվ պատճառ այս առաջարկությունը մերժելու համար:*

Գործող կարգ	**15[1]-րդ կետի**
Գործող կարգի պահանջը	Գործող կարգում չկա 15[1] –րդ կետ և անհրաժեշտություն է առաջացել այն լրացնել:
Կարգի փոփոխություն կատարելու առաջարկը	*Կարգի 15-րդ կետից հետո լրացնել 15.1 կետը՝ հետևյալ բովանդակությամբ.* *<< Խմբի գործության արդյունավետության բարձրացման նպատակով Խումբն իր գործունեության մեջ կարող է ներգրավել համապատասխան մասնագիտական ուղղվածությամբ փորձագետներ: Խմբի միջնորդությամբ Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը փորձագետին տալիս է ժամանակավոր անցաթուղթ՝ ձերբակալված անձանց պահելու վայրեր այցելելու համար:* *Փորձագետը կարող է այցելել ձերբակալված անձանց պահելու վայրեր միայն Խմբի անդամների հետ>>:*
Հիմնավորում	*Դիտորդական խմբի կողմից մշտապես բարձրացվել է փորձագետ ունենալու հարցը: Վերջինս՝ իր համապատասխան և անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներով կաջակցի խմբի մասնագիտական զարգացմանը, աշխատանքների ճիշտ և արդյունավետ կազմակերպմանը:* *Դիտորդական խմբի կարծիքով անհրաժեշտ է նաև փորձագետներին ընձեռնել խմբի անդամների ուղեկցությամբ ՀՊՎ այցելելու հնարավորություն՝ այցելության աշխատանքները գնահատելու և առաջարկություններ ներկայացնելու համար:*

Գործող կարգ	**20-րդ կետի**
Գործող կարգի պահանջը	Երկրորդ պարբերության - Խմբի գործունեության էթիկայի կանոնները հաստատվում են խմբի նիստի կողմից՝ խմբի անդամների երկու երրորդի հավանությամբ:
Կարգի փոփոխություն կատարելու առաջարկը	*Երկրորդ պարբերությունը ճանաչել ուժը կորցրած:*
Հիմնավորում	*Այս դրույթը արդեն իսկ նախատեսված է 19-րդ կետի 2-րդ պարբերությունում, իսկ 20-րդ կետում կրկնվում է, որը հակասում է <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ կետին, այն է՝ իրավական ակտերում պետք է բացառվեն իրավական նորմերի անհիմն կրկնությունները, ներքին հակասությունները:*

Գործող կարգ	**22-րդ կետի**
Գործող կարգի պահանջը	Խմբի անդամի լիազորությունները դադարեցվում են Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամանով, եթե. ե) խախտել է սույն կարգով, կամ խմբի գործունեության էթիկայի կանոններով, կամ ՀՊՎ-ի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերով սահմանված դրույթները.
Կարգի փոփոխություն կատարելու առաջարկը	*<ե> կետում <<դրույթները>> բառից հետո լրացնել հետևյալ նախադասությունը.* *<և առկա է խմբի անդամների երկու երրորդի միջնորդությունը>>*
Հիմնավորում	Ներկայիս գործող շարադրությամբ <ե> կետի իրագործման մեխանիզմը բացակայում է և հստակ չէ, թե ինչպես և ում կողմից կարող է բացահայտվել իրավական ակտերի խախտման փաստը: Առաջարկվող փոփոխությունը հնարավոր է դարձնում <ե> կետի կենսագործումը: